66. ՔՈՌ ԽԱԼԻՎՈՐ

Կէղի, չէղի, մե խալիվորմ կէղի, օր էրկու աչքն քոռ կէղի։ Շատ մալի դովլրթի տեր կէղի։ Ընդրա աչքեր ուր մարդագել քուր հանած, կերած կէղի։

Վախտով մեկ ջեհել տղա կէղի, ուրան մե իմաստուն տաժիկ (շուն) կունենա։

Կասա.— Տաժիկ, իմա՞լ կէղի օր ես էրթամ էղիմ էդ հալիվորուն տղա։

Կասա.— Էտիկ օրեն մեկ խմորի տաշտ ճմուռ կուտա (ուտում է) չկշտանա։ — Տաժիկ կասա.— Էն ժամ օր էնիկ ճմուռ կուտա, դու կէրթաս կէղիս մե մժկի (մժեղ) պես, կմտիս ընտրա պինչ, էնի ճմուռ կուտա կխըլրսի, կփռնգտա, դու գիգաս, գընկիս կէղիս հ՛աղաքվան տղա, կասես. «Ես քու տղեն եմ»։ Խալիվոր կասա. «Օր դու իմ տղեն ես, ընձի մե նշան կա, դու կկանիս պատի տակ, ես գելիմ պատի վրեն, կպողիմ (միզել) քու վրեն, գիչիմ տակ, կիչկիմ, թե օր պոզ (մեզ) չորցե քու վրեն, դու իմ տղեն չես, թե չէ չորցե, իմ տղեն ես»։ Դու շոռ ջուր կքսիս քըզի ու կմտիս ընտրա պինչ, պոզ քու վրան չի չորնա։

Տղեն ա, կէղի մժիկ, կմտի խալիվորու պինչ։ Խալիվորն ա, ճմուռ կուտա ու կփրցի, կփռնգտա, կիշկա օր տղե մի ուր հ՛առեճ կանուկ ա։

Կասա.— Ես քու տղեն իմ, ափո՛։

Կասա.— Դու օր իմ տղեն ես, ընձի մեկ թարշըման (նշան) կա, դու պտի կանիս պատի տակ, ես գելիմ պատի վրեն, կպողեմ

քու վրեն, թե օր պոզ չորցավ, դու իմ տղեն չես, թե օր չչորցավ՝ իմ տղեն ես։

Խալիվոր դիշի պատեն, կիշկա օր չէ չորցե, կըսա.

— Դու իմ տղեն ես։ — Կէնա ուրին տղա, ու կառի կէրթա։ Շատ վախտ խըտ հ՚իրարու կապրին։

Կասա.— Ափո՛, քու աչքեր ո՞րն ա քոռցուցե։

Կասա.— Լաո՛, քու խորքուր մարդագել պառավմ ա իմ աչքեր խանեց, կերավ, առավ իմ դովլրթի կես ու գնաց։

Կասա.— Էտմալ ա, ափո, ես պտի էրթամ իմ խորքուր ըսպանեմ։

Կասա.— Լաո՛, չկանաս, էրթըլու խետ, էնի քեզի կուտա։

Կասա.— Ուտա, չուտա, ես պտի էրթամ։

Կասա.— Լաո՛, օր պտի էրթաս, ընդրան մե թարշըման կա, եփ օր կէրթաս ընդրա քավշան, մե ջոջ ծառ կա, էն ծառի տակ կնստիս, էնի քու խոտ կառի ու գիգա, Օր էկավ՝ ընտրա ծծեր գետնի խետ կքըռա (քաշ է գալիս), գուզե օր քըզի ուտե, դու շուտ խասի, ընդրա ծիծ առ քու բերան, ասա. «Ես քու ախպոր տղեն եմ»։ Էնի կասա. «Օր դու իմ ախպոր տղեն ես, մե քիչ իմ գլուխ քթվա»։ Ասսու խրամանքով էն ծառ կկզի, էնրա ճղեր կփաթվին ընտրա ծամեր, ու կբարձրցուն, դու էնտեխ կզանես. էնի կսպանես։

Տղեն ա, դելի կէրթա էդ մարդագել կնկա քավշան, էդ ծառի տակ կնստի։ Մարդագել պառավն ա տղի խոտ կառի, գիքա։ Տղեն կտեսի օր օղորթ ա, ծծեր գետնի խետ կքըռա, տղեն կխասի ու ծիծ կառի բերան։

Պառավ կեսա.— Ցա՛, խողածին. ի՞նչ դավի ա։

Կասա.— Ես խողածին չեմ, քու ախպոր տղեն եմ։

Կասա.— Օր հըմալ ա, արի փշուր մի իմ գլուխ քթվա։

Տղեն ա պառվու գլուխ կգնա ուր չոքին, կքթվա։ Ասսու խրամանքով ծառ կկզի, ճղեր կփաթվի պառվու ծամեր ու կբարձրցու։ Տղեն կքաշա ուր թուր ու կզարկա, չոքերուց կկտրա գելի չուր վիզ։ Պառավ էնտեխ կփիթնա։ Գելի պառվու տան ճամբախ կիտա ուր հ՚առեճ ու կէրթա։ Կէրթա կտեսի պառվու էրկու ախչիկ նստուկ են շեմքի վրեն։

Կզարկա զէրկու ախչիկ լէ կսպանա ու կդառնա, կիգա պառվու աչքեր կխանա, կառի կէրթա ուր խոր մոտ, կասա.

— Ահա՛, քու քուր ըսպանի, ուր էրկու ախչիկ լէ ըսպանի։

— Օղո՞րդ կըսես, լաո,— կասե խեր։

Կասա.— Թե չավտրնաս, էդա լէ ընդրա աչքեր։

— Էտմալ ա,— կասա,— էլի քյարվան մի դրըստա, գնա ընդրա դովլաթ բարձի ու առ արի։

Տղեն ա, գելի քյարվան մի կդրստա, կէրթա կառի պառվու գովլաթ ու գիգա։

Խալիվոր կասա.— Գինամ օր դու իմ տղեն ես։

Կմնա վախտ մի, խալիվոր կասա.— Լառ՛, արի փշուր մի իմ գլոխ քթվա։

Տղեն ա, խալիվորու գլոխ կդնա ուր չոքին, կըքթվա, կղվռնա, կիչկա օր իրեք խատ բալնիք խալիվորու մուրքի մեջն ա։ Կառի էս բալնըքներ, օր մի գողտուկ կէրթա էտոր Հ՚օդի դռներ կբանա։ Հօ՚դե մի լիք օսկի, մեկ լէ անկին քար, մեկ լէ ջուխտ մի ակ կթալա միջեն։ Տղեն ա, կէրթա ուր ճկութ կզարկա, մեկ ական մեջ, կէղի օսկի, մեկել կզարկա մեկել ական մեջ՝ կէղի արծաթ ու կդառնա գիգա։

Կմնա քանիմ օր, խալիվոր մեկ լէ կասա.

— Լառ՛, արի փշուրմ իմ գլոխ քթվա։

Տղեն գլոխ կդնե վըր չոքին, կքթվա, գողտուկ բալնքներ կդնա մուրքի մեջ։

Կմնա քիչմ վախտ, խալիվոր կմեռի, կմնա աղեն մինակ։ Տղեն ա կէրթա ուրին մեկ կնիկ կբերա։ Կնստի ուրանց տուն կվելե (վայելել) խալիվորու դովլաթ ու կուրխընա։

Էն խասավ ուր մուրազին, դուք լէ խասնիք ձեր մուրազին։

Երկնքից իրեք խնձոր իջավ, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ փայ էնողին։